ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ

| | |
|---|---|
| **ՊԱՇՏՈՆ՝** | Հաճախորդների սպասարկման բաժնի մասնագետ «Նոր Նորք» մասնաճյուղում |
| **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ՝** | Լրիվ դրույք |
| **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝** | ք. Երևան, ՀՀ |
| **ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ՝** | Հնարավորինս շուտ |
| **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ՝** | Փետրվարի 26, 2018թ. |
| **ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝** | Մարտի 12, 2018թ. |
| **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ՝** | Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով |

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անելիք Բանկը փնտրում է հմուտ և բանիմաց Հաճախորդների սպասարկման բաժնի մասնագետի՝ Բանկի «Նոր Նորք» մասնաճյուղում հաճախորդների սպասարկում իրականացնելու նպատակով:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախորդների հաշիվների բացում, վարում և փակում,
- Ավանդային հաշիվների բացում, սպասարկում և փակում,
- Արտարժույթի կանխիկ և անկանխիկ առքուվաճառքի իրականացում,
- Վճարային համակարգերով գործառնությունների իրականացում,
- Հաճախորդների կողմից ներկայացված վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում և «Գործառնական օր» ծրագրում մուտքագրում,
- Կոմունալ վճարումների ընդունում և կատարում:

## ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն տնտեսագիտական/ֆինանսական կրթություն,
- 1-2 տարվա աշխատանքային փորձ բանկային համակարգում,
- Կանխիկ դրամի հետ աշխատելու փորձ,
- ՀՀ բանկային օրենսդրության իմացություն,
- Համակարգչային գիտելիքների լավ իմացություն (MS Office),
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն,
- Հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություն,
- Թիմային աշխատանքի պատրաստակամություն,
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն:

**ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու Անելիք Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@anelik.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Անելիք Բանկ» ՓԲԸ հիմնադրվել է 1990թ. թեթև արդյունաբերության բնագավառի ձեռնարկությունների կողմից՝ որպես փայատիրական կոմերցիոն բանկ: 1996թ. «Անելիք» փայատիրական առևտրային բանկը գրանցվել է (ՀՀ ԿԲ արտոնագիր No 9) և սկսել է գործել որպես «Անելիք Բանկ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն: «Անելիք Բանկ» ՓԲԸ ունիվերսալ առևտրային բանկ է, որն ակտիվ մասնակցություն ու ներդրում ունի երկրի սոցիալ – տնտեսական մակարդակի բարելավման բնագավառում: 2007թ. «Անելիք Բանկ» ՍՊԸ վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության: